ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

18. 03. 2024

No 01/01-377

«Մայ քորնր» ՍՊԸ

հասցե՝ Ք Երևան Հյուսիսային պողոտա 6

էլ. փոստ՝ Mybookstore.mbs@gmail.com

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ և «Մայ քորնր» ՍՊԸ միջև 18.01.2024թ. կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ՀԳ-2-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1-ին կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿԸ, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի **մասնակի** հրաժարվում է կնքված պայմանագրերից համարելով այն լուծված՝ 42000(քառասուն երկու հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տաս օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:
Ընդ որում, եթե՝ «Մայ քորնր» ՍՊԸ սույն ծանուցումը ստանալուց հետո 5 հինգ բանկային օրվա ընթացքում մինչև 22.03.2024 թ ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018001876 հաշվեհամարին վճարի 4200 (չորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ որպես տուժանք պայմանագրի կատարման ապահովում և 6300 (վեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ որպես որակավորման ապահովումները , ապա ընկերությունը չի ներառվի գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվեհամարին և վճարված կտրոնների բնորինակները ներկայացնել ՀՊՏՀ ՊՈԱԿ Գնումների բաժին 502 սենյակ:

Ռեկտոր Դ Գալոյան

Կատարող՝ Նորայր Վարդանյան

Գնումների բաժնի պետ

Հեռախոս 010 593 483
էլ. փոստ gnumner.asue@mail.ru